ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/17

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Մասնակից՝ «Մաքս Պրինտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ Ս. Սեդրակյանի,

«Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Բ. Գևորգյանի, ներկայացուցիչ՝ Էդ. Սահակյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, գրասենյակային ապրանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ/1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.01.2021թ.-ի թիվ 26/26/666-2021 գրությամբ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 20/01/2021թ. թիվ 3/27/2270-21 գրության հիման վրա, 20.01.2021թ.-ին «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 20.01.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 20.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/17 համարի ծածկագիրը:

29.01.2021թ.-ին, 10.02.2021թ.-ին և 19.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.02.2021թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 20/01/2021թ. թիվ 3/27/2270-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«ՀՀ ոստիկանության և «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի միջև 20 ապրիլի 2020թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ/1 ծածկագրով ոստիկանության պատվոգրերի ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում՝ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն ստանձնած պարտադրությունները չի կատարել՝ չի մատակարարել պայմանագրով սահմանված 200 /երկու հարյուր/ հատ ոստիկանության պատվոգիր, որի ընդհանուր գումարը կազմում է 580 000 /հինգ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք Ձեզ ձեռնարկել միջոցներ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.12.2020թ.-ի գրությամբ դիմել է «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.01.2021թ.-ի թիվ 26/26/666-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 17.02.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«2020 թվականի մարտի 19-ին կնքված N ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՅՈՒՅԱՆԱԿ-2020/ՏՎ/1 պայմանագրի համաձայն՝ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն ՀՀ Ոստիկանության համար մինչև 05.05.2020թ. ընկած ժամանակահատվածում պատրաստել, մատակարարել և երկու անգամ Նալբանդյան 130 հասցեում գտնվող ՀՀ Ոստիկանության շենք այցելությամբ տեղադրել է թվով 22 ցուցանակներ:

Մեկ այլ 2020 թվականի ապրիլի 4-ի N ՀՀ Ո ԳՀԱՁԲ-նյութեր 2020/13/1 պայմանագրով ընկերությունը երկրորդ և երրորդ եռամսյակների ընթացքում պետք է պատրաստեր ու մատակարարեր թվով 200 պատվոգրեր: Քանի որ, պայմանագրի տեխնիկական բնութագիրում հստակ չէր նկարագրվել մատակարարվող ապրանքի վերջնական տեսքը (մասնավորապես գույնը նշված էր կապտագույն, իսկ կապույտն ունի բազմաթիվ երանգներ, նշված էր թղթի տեսակը, սակայն խտությունը բացակայում էր, բացի այդ պատվոգիրը իրենից ենթադրում է համապատասխան տեքստի առկայություն, ինչը նույնպես բացակայում էր), ուստի անհրաժեշտ էր, որ Ընկերության աշխատակիցները

հանդիպեին պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման հետ և համաձայնեցնեին ապրանքի վերջնական տարբերակը: ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ-ՑՈՒՑԱՆԱԿ-2020/ՏՎ/1 պայմանագրի կատարման համար ընկերության տնօրենը նշված ժամանակահատվածում մի քանի անգամ այցելել է ՀՀ Ոստիկանություն և փորձել է հանդիպել նշված պայմնագրի պատասխանատու ստորաբաժանմանը, սակայն հայտարարված արտակարգ դրության պատճառով պատասխանատու ստորաբաժանումն անցել էր աշխատանքի հեռավար ձևաչափի և հնարավոր չի եղել համաձայնեցնել մատակարարվող ապրանքի հստակ տեխնիկական բնութագիրը: Հեռախոսակապի միջոցով շփումների արդյունքում պատասխանատու ստորաբաժանման հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ պայմանագրի կատարմանը վերջիններս կանդրադառնան աշխատանքի հեռավար ձևաչափը վերացնելուց հետո, ինչի մասին ընկերությանը պետք է տեղեկացներ պատասխանատու ստորաբաժանումը:

Քանի որ, 2020 թվականի երկրորդ և երրոդ եռամսյակների ընթացքում և դրանից հետո էլ պատվիրատուի կողմից որևէ արձագանք չի եղել պայմանագրի կատարման մասով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտակարգ դրության պատճառով պետական մարմինների հետ կնքված բազմաթիվ նմանատիպ պայմանագրեր անժամկետ հետաձգվել էին դրանց անհրաժեշտության վերացման պատճառաբանությամբ, ուստի այս դեպքում էլ ընկերությունը սպասել է պատվիրատուի կողմից տվյալ պայմանագրի կատարման անհրաժեշտության տեղեկացմանը:

Կողմերի միջև կնքված պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Իսկ 7-րդ կետի համաձայն՝ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

Նկատի ունենալով, որ 2021թ. հունվարի 29-ի ժամը 14:45-ին հրավիրված ՍՑ-ԼՕ-2021/17 ընթացակարգի քննության նիստին պատվիրատուի կողմից ներկայացուցչի

բացակայություն էր, այդ պատճառով ընկերության տնօրենը «Հայ փոստ»-ի պատվիրված նամակի և Ոստիկանության կայքում դիմումների համար նախատեսված էլեկտրոնային հասցեին ուղղարկել է դիմում ուղղված պայմանագրի կողմ հանդիսացող ՀՀ Ոստիկանության պետի տեղակալ պարոն Վ. Մովսիսյանին, խնդրելով ներկայացնել վերոնշյալի հետ կապված պատվիրատուի դիրքորոշումը:

2021 թվականի փետրվարի 12-ին ընկերությունը ստացել է ՀՀ Ոստիկանության տնտեսական վարչության պետ Ա. Ներսիսյանի պատասխան գրությունը, որտեղ անդրադարձ չկա տեխնիկական բնութագրի վերաբերյալ ընկերության կողմից ներկայացրած հարցադրումներին, այլ ընդամենը նշվել է, որ պատասխանատու ստորաբաժանումն հեռավար ձևաչափով չի աշխատել և ընկերության աշխատակիցների հետ որևէ պայմանավորվածություն չի եղել:

Մեկ անգամ ևս պնդում եմ, որ ընկերության տնօրենը 2020 թվականի ապրիլ, մայիս ամիսներին երկու անգամ Նալբանդյան 130 հասցեում գտնվող ՀՀ Ոստիկանության շենք այցելությամբ տեղադրել է թվով 22 ցուցանակներ և այդ նույն այցելությունների ժամանակ փորձել է հանդիպել պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցներին, սակայն հսկիչ անցակետում հայտնել են, որ նշված ստորաբաժանումն աշխատում է հեռավար ձևաչափով: Դրանից հետո, հեռախոսակապի միջոցով պատասխանատու ստորաբաժանման հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ պայմանագրի կատարմանը կանդրադառնան աշխատանքի հեռավար ձևաչափը վերացնելուց հետո, ինչի մասին ընկերությանը պետք է տեղեկացներ պատասխանատու ստորաբաժանումը:

Տպավորություն է ստեղծվում, որ պատասխանը գրվել է արտակարգ դրության ժամանակ սահմանված սահմանափակումները և դրանց արդյունքում առաջ եկած բազմաթիվ բարդությունները հաշվի չառնելով (մարդկանց տեղաշարժի և շփումների խիստ սահմանափակումներ, տարբեր նյութեր, հումք և այլ անհարաժեշտ ապրանքներ մատակարարող կազմակերպությունների չաշխատելը, ապրանքների ներկրման խափանումները, գների տատանումները և այլ), այլ ընդամենը տրվել է ստանդարտ բնույթի պատասխան, որում պայմանագրի չկատարման ամբողջ պատասխանատվությունը փորձ է կատարվել բարդել ընկերության վրա, ավելին, հերքվել են այն փաստերը, որոնց վերաբերյալ ընկերությունը այս պահին հասկանալի պատճառներով, չի կարող ներկայացնել ապացույցներ: Ընդ որում, պատասխան գրությունը ենթադրում է, որ ընկերությունը պետք է առանց պատվիրատուի հետ համաձայնեցման տպագրեր նշված պատվոգրերը և ուղարկեր պատասխանատու ստորաբաժանմանը, իսկ վերջիններս էլ իրենց հայեցողությամբ

ցանկացած պատճառաբանությամբ (մասնավորապես թղթի որակը, գույնի երանգը, տեքստի հետ կապված խնդիրներ և այլն) կարող էին դրանք չընդունել և պահանջեին ապրանքի նոր խմբաքանակ, ընդ որում այդ գործընթացը կարող էր կրկնվել մի քանի անգամ: Ցանկանում եմ տեղեկացնել, որ կարող եմ ներկայացնել 5-ից ավել պատվոգրի օրինակ, որոնք համապատասխանում են տեխնիկական բնութագրին, սակայն էականորեն տարբերվում են միմյանցից:

«Մաքս Պրինտ» կազմակերպությունը իր պայմանագրային պարտավորությունները կատարում է պատշաճ և սահմանված ժամկետներում, առանձնակի ուշադրությամբ վերաբերվելով պետական կարիքների համար կնքված պայմանագրերին, բացի այդ, ընկերությունը բոլոր դեպքերում պատրաստակամ է եղել կատարել նշված պայմանգիրը, քանի որ դրա արդյունքում շահույթ էր ստանալու:

Ավելորդ չէ նշել նաև, որ արտակարգ դրությամբ պայմանավորված 2020թ-ի մարտ ամսից սկսած պետական բազմաթիվ հաստատությունների հետ կնքված պայմանագրեր չեղարկվել են կամ հետաձգվել անժամկետ և այս դեպքում էլ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը նախապես ձեռք բերված փոխադարձ համաձայնությամբ, պետք է տեղեկացներ պայմանագրի անհրաժեշտության առաջացման մասին և արտակարգ դրության պայմաններում դրա բացակայությունը Կատարողին հիմնավոր հիմք է տվել կարծել, որ ապրանքի անհրաժեշտությունը վերացել կամ հետաձգվել է:

Հարկ եմ համարում նշել նաև, որ պայմանագրի մատակարարման ավարտին ՀՀ-ում հայտարարվել է ռազմական դրություն և այն շարունակվել է մինչև 4-րդ եռամսյակի ավարտը: Այդ ժամանակահատվածում «Մաքս Պրինտ» կազմակերպությունը մասամբ դադարեցրել է իր ընթացիկ աշխատանքները, քանի որ ներգրավված է եղել ՀՀ ՊՆ թիկունքի մատակարարման աշխատանքներում, այն համարելով կարևոր ու առաջնահերթ, ինչի հավաստումն է ՀՀ ՊՆ կողմից տրված պատվոգիրը և «Սատար» ջոկատի հրամանատարի շնորհակալագիրը:

Նշեմ նաև, որ 2020 թվականի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածում բոլոր պետական հաստատություններին ընկերության կողմից մատակարարվել է այն ապրանքները և մատուցվել այն ծառայությունները, որոնց մասին տեղեկացրել են պատվիրատուները՝ բնականոն աշխատանքի վերադառնալուն պես, իսկ որոշ դեպքերում էլ պայմանագրերը վերջիններիս նախաձեռնությամբ խզվել են, քանի որ 2020 թվականի ընթացքում դրանց անհրաժեշտությունը չի առաջացել:»:

4. <u>ՍՑ-LO-2021/17 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ/1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 2-րդ և 3-րդ եռամսյակներում (բայց ոչ ուշ 20.12.2020թ.-ը) պետք է իրականացվի համապատասխանաբար 100 և 100 հատ գովասանագրերի և պատվոգրերի մատակարարում:

iii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 18.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/29 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ/1» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Մասնակիցը կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի (մատակարարը Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ 200 /երկու հարյուր/ հատ ոստիկանության պատվոգիր, սակայն ընդհանրապես չի մատակարարել):

Համաձայն Պայմանագրի 2.1-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ոստիկանությանը մասնակի միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2020թ. թիվ 26/26/666-2021 գրությամբ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ

ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ/1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ 2-րդ և 3-րդ եռամսյակներում (բայց ոչ ուշ 20.12.2020թ.-ը) պետք է իրականացվի համապատասխանաբար 100 և 100 հատ գովասանագրերի և պատվոգրերի մատակարարում:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 18.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/29 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ/1» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Մասնակիցը կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի (մատակարարը Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ 200 /երկու հարյուր/ հատ ոստիկանության պատվոգիր, սակայն ընդհանրապես չի մատակարարել):

Համաձայն Պայմանագրի 2.1-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությանը 18.01.2021թ.-ին մասնակի միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 18.01.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 20.01.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/29 ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները չեն մատակարարվել վերջինիս կողմից դրսևորած անգործության արդյունքում, իսկ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Անդրադառնալով սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերին ու հանգամանքներին, մասնավորապես՝ 17.02.2021թ.-ին Բողոքներ քննող անձին ուղղված գրությանն ու դրա կից նյութերին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Պայմանագրի 6-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, **եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Բողոքներ քննող անձը նաև փաստում է, որ Օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, ՀՀ կառավարության

16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքը օբյեկտիվորեն չէր կարող ազդել Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման վրա, քանի որ Պայմանագիրը կնքվել է Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության ժամանակահատվածում, որպիսի պայմաններում անհաղթահարելի ուժի ազդեցության հիմքով Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու համար Մասնակիցը չի կարող ազատվել պատասխանատվությունից, ինչպես վերը նշվեց, անհաղթահարելի ուժի ազդեցությունը պետք է ծագի պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Մասնակցի կողմից դիրքորոշմամբ չներկայացվեցին բավարար փաստեր ու հանգամանքներ, որոնց առկայության պարագայում հնարավոր կլիներ հաստատված համարել արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքի՝ Մասնակցի ստանձնած պարտավորությունների չկատարման վրա օբյեկտիվորեն ազդելու փաստի մասին: Վերջինիս կողմից չներկայացվեց կոնկրետ որևէ գործողություն, որը հաղթահարելը, պայմանավորված արտակարգ դրությամբ, օբյեկտիվորեն եղել է անհնարին՝ կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում, այն որ՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ (չկատարման) կատարման պատճառն եղել է Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման անգործությունը, ավելին՝ նշվածը հերքվում է գործում առկա՝ Պատվիրատուի կողմից Մասնակցին 08.02.2021թ.-ին ուղղված գրությամբ: Ինչպես նաև հարկ է նկատել, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրում առկա չէ որևէ նշում առ այն, որ մատակարարման ենթակա ապրանքի վերջնական տեսքն ենթակա է համաձայնեցման պատասխանատու ստորաբաժանման հետ:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից Պայմանագրով ստանձնած վերջինիս պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը պայմանավորված չի եղել օբյեկտիվ հանգամանքներով, որոնց

առկայության դեպքում հնարավոր կլիներ սույն գործի քննության ընթացքում արձանագրել Մասնակցի մեղքի բացակայությունը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի իմաստով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ մինչև ՀՀ կառավարության 27.09.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը Մասնակիցն օբյեկտիվորեն կարող էր կատարել ստանձնած պարտավորությունները, ինչպես սահմանվել է Պայմանագրի տեխնիկական բնութագրում՝ 2-րդ և 3-րդ եռամսյակներում մատակարարելով համապատասխանաբար 100 և 100 հատ գովասանագրեր և պատվոգրեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2020թ. թիվ 26/26/666-2021 գրությամբ «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/17 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ